

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԶԷՐ...



Բանաստեղծ Արամայիս Սրապեան

Պատահական չէր որ 13 Փետրուարին մեր Արամայիս Սրապեանն այս կեանքէն միւս կեանքն անցնէր։ Այդ օրը համայն Հայութեան տօն էր. երկինքին մէջ կը լսուէր վերստին աւարայրեան երգը. Հաւասարեցէ մահս մեր ընդ մահու արդարոց։ Աւարայրի դռները բացուած էին եւ Հայութիւնն երանական միութեան մէջ էր երկինքի հետ։ Այդ օրն ալ Արամայիս պիտի երգէր.

Վաղն առաւօտ ամէն ոք
Շաւարշանայ դաշտին մէջ
Պիտի զրահն իր հագնի....

Այդ զրահը լոյս էր, լոյսի հաւատք եւ

պատմութեան. տարիներ վերջն ալ պիտի մնար անկարան եւ անմաշ. պիտի ըլլար կապոյտ երկինք մեր աշխարհին վրայ, օրհնութիւն տուներու, ճրագ ընտանիքներու, սուր զինուորականներուն ափին մէջ. երգ եւ շարական մեր ժամերուն, ուր միշտ պիտի կրկնէին. Հաւասարեցէ մահս մեր ընդ մահու արդարոց։

13 Փետրուար 1969ին, ան ժպտուն բարձրացաւ դէպի երկինք. ես այսպէս կը հաւատամ. Թերեւս ինքը փափաքած էր, ուշ կամ կանուխ այդ օրն ըլլար իր վախճանը. ամէն մարդ իր մահուան համար, գեղեցիկ ամիս մը, գեղեցիկ օր մը կ'ընտրէ. այսպէս եղաւ։ Ես բարիներու փափաքին կը հաւատամ։ Իր բնածին ազգասիրութեան արդար վարձքն ստացաւ. երթալ եւ Վարդաններու հետ երգել. Հաւասարեցէ...

Ազգասիրութիւնն ալ գեղեցիկ առաքինութիւն է, պիտի ըսէր Ալիշան. մանաւանդ մեզի՝ Հայերու համար. մեր տունները, մեր յոյսերը տարիներով աւերակ մնացին. այն որ քար քարի վրայ կը դնէ՝ որրին տունը կը շինէ, Լուսաւորչի եկեղեցին կը շինէ։ Արամայիսն այդ հաւատքով լծուեցաւ աշխատանքի. ժպտեցաւ, սիրեց, քաջալերեց. բարձրացուց յոյսերը, երգեց հայրենիքը մանուկ խանդավառութեամբ։ Թէպէտ օտար աշխարհի մէջ կ'ապրէր, բայց իր հոգին եւ տունը Հայաստան կը կոչուէին. այնքան ձգիչ եւ գեղեցիկ՝ որ ծանօթ եւ անծանօթ, իր շուրջը կը դառնային. Ծծելու լոյսն հայրենի դաշտերուն։

Ես կը ճանչնամ իր մանկութեան տա-

րիները, բարի եւ հեղահամբոյր էր. անպայման որբութեան ճամբաներուն վրան ալ եղած է լի յոյսով եւ ժպտուն. ցաւն ու տառապանքը տարած է բարի համակամութեամբ. արդարներու պէս՝ որոնց ուսերուն վրայ կը հանգչի մարդկային երջանկութիւնը։

Իր Ստեփան մեծ եղբօրն հետ, միշտ ձեռք ձեռքի, պիտի անցնէր, չափէր տարաբնուութեան ճամբաները, ոտքերուն մէջ փուշ պիտի մտնէր, սրտին մէջ փուշ պիտի մտնէր. ու կեանքի ալիքներուն խաղալիկ, ու քարէ քար դառնութիւն պիտի նետուէր աշխարհէ աշխարհ։ Ինչո՞ւ զըրկուէր իր սիրալիւր ծնողներէն. ինչո՞ւ ճղակոտոր նետուէր հողմացրիւ։ Արամայիս (երբեմնի վիկէնը) չէր ըմբռներ մարդկային չարութիւնը. բարիները չեն դիտեր թէ ի՞նչ է չարը. ի՞նչ կը խորհի իր մերձաւորի մասին, զայն օր մը յօշոտելու համար։ Արամայիս մինչեւ կեանքին վերջն ալ պիտի չըմբռնէր չարութիւնը եւ անոր հոգին, որովհետեւ իր սրտին մէջ որոմ չէր ցանուած։

Բայց աներեւոյթ բարի ձեռք մը, որ Նախախնամութիւն կը կոչուի, կը հսկէր իր վրան. անցաւ եղբօր հետ Պոլսէն Յուստան, յետոյ գեղեցիկ Քորֆուն. ան 15 տարեկան էր (ծնած Կէյվէ 1910, Հոկտ. 25ին). չեմ գիտեր թէ կ'երազէ՞ր արդեօք հանդրուանէ հանդրուան, օր մը Վենետիկ հասնիլ։ Այո՛, պիտի ողջունէր այդ ծովերու թաղուհին ալ, պիտի մըտնէր այն հայկական վարժարանին սեմէններս եւ իր վրան պիտի սփռէին գեղեցկութեան ծիրանին Վերոնէզէի գոյներով։ Հոն պիտի գտնէր Պէշիկթաշեան, Արփիարեան, Վարուժան եւ ուրիշ հայ մը. տաւորականներ, որոնց մասին Թերեւս տարտամօրէն լսած էր։ Ինքը նորընծայ, անհուն եռանդով պիտի նուիրուէր հայ մտքի պաշտամունքին. պիտի գտնէր այդ մոգական քաղաքին մէջ սէր եւ գեղեցկութիւն եւ Հանդիպումներ պիտի ունենար Մուսային հետ։ 1925ի աշնան՝ կը մտնէր Մուրատ - Ռափայէլեան վարժարան աղօթքի նման կրկնելով.

Ողջոյն քեզ, Վենետ դիցուհի
Սուրբ մայրութիւն դուն անհատ....

Հոն պիտի գտնէր իր կորսուած մայրութիւնը. հայրենի տուն մը, պիտի թօթափէր վրայէն որբութեան ճամբաներու փոշին եւ պիտի գտնէր հայր մը՝ որ իր սիրտը լեցնէր հայ մտքի աղբիւրէն։

Իր դիմացն ելաւ Հ. Թադէոս Թովմաճեան, տարիներով վարժ դաստիարակ, իսկական հայր մը, հայադէտ, բանաստեղծութեան սիրահար մը, եւ որը Արամայիսը շատ պէտք ունէր այդպիսի հօր մը։ Հոգեւին կապուեցաւ իր դաստիարակին, քերթուած նուիրեց եւ անոր անունով երգուեցաւ հայ լեզուի խրթին հարցերուն մէջ։

Ապա պիտի գտնէր Հ. Եղիա Փէշիկեանը, ուրիշ հայկաբան մը, հմուտ դրաբարդէտ, որ պիտի աւանդէր Վարուժանի հայերէնը, դասական գրականութիւնը եւ Մխիթարեան բանաստեղծութեան հոգին։ Անոնք նետեցին ոսկի սերմերը սրտի մը մէջ՝ որ պարարտ էր, ուր գիտէին թէ պիտի հասուննար ցորենը մէկի տեղ հարւաւոր։ Արամայիսը հասակ առաւ, զարգացաւ մտքով ու սրտով, իր բնածին ազնուութիւնը չքեղ կերպարանք առաւ. կրնար այլեւս բանալ իր թեւերը, անհամբեր ծիծեռնակի նման, դէպի համալսարան. ունէր վարժարանի վկայականը՝ որ իր առջեւ կը բանար բոլոր համալսարանները, դրական հասունութեամբ լեցուն էր հոգին եւ Մխիթարեաններու թուալաւոր սան էր (1929)։

Մեկնեցաւ դէպի Միլան, հոն էր իր Ստեփան եղբայրը, գեղեցիկ արհեստի մը եւ աշխատանքի ճամբուն վրայ։ Եթէ նիւթապէս իրարու չէին կրնար օգնել, դէթ եղբայրօրէն եւ սրտով մօտ էին։ Վեց տարիներ պէտք էին բժշկութեան համալսարանի աւարտելու համար եւ Արամայիս լիով կատարեց իր վրայ դրուած յոյսերը։ Ինքը պիտի շինէր իր բոյնը, իր սէրը, չունէր Ամերիկայի մէջ հարուստ քեռի։

Երբ 1935ին համալսարանն աւարտեց, իբր իտալահայտակ՝ զէնքի տակ կանչը-

